

Եթե անձնագրի էջից են տարբեր նյութերով մաքրում թանաքը, ապա ձեռքերից ջնջելն ավելի հեշտ է. Տ. Մուկույան
6 նոյեմբերի 2015

<http://www.tert.am/am/news/2015/11/06/tigran/1834962>

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկույանը Tert.am-ի հետ զրույցում անդրադարձնալով ընդդիմության՝ մատների թանաքոտման մասին առաջարկին, նկատեց, որ, եթե համացանցում կային տեսանյութեր, թե ինչպես թաց անձեռոցիկով անձնագրից ջնջվում է թանաքը, ապա մատների վրայից ջնջող նյութերն ու միջոցները շատ ավելի շատ կլինեն: Նա նաև նկատեց, որ դեկտեմբերի 6-ին անցկացվող սահմանադրական հանրաքվեին օգտագործվելու է նույն ընկերության կողմից առաջարկվող հատուկ թանաքանյութ, ինչն օգտագործվել է նախորդ անգամ, քանի որ այլ ընկերություններից նման առաջարկներ չեն եղել:

-Պարոն Մուկույան, ընդդիմության կողմից առաջարկվող մատները թանաքոտելու առաջարկը չընդունվեց. դուք՝ որպես ԿՀ նախագահ՝ ի՞նչ կարծիք ունեք առաջարկի վերաբերյալ:

-Մատների թանաքոտման ինստիտուտի կիրառելիության հետ կապված՝ մոտեցումս այն է, որ երբ մենք կիրառում ենք ցանկացած նմանատիպ միջոց, հատկապես, եթե խոսքը տեխնիկական միջոցների մասին է, պետք է լինենք շատ զգուշավոր և հաշվարկենք բոլոր հնարավոր ռիսկերը, որ կարող են ծագել: Որովհետև շատ լավ նպատակների համար ներմուծված միջոցը, եթե դրա բոլոր ռիսկերը լիարժեք ընկալված ու գնահատված չեն, կիրառելիության առումով կարող է հակառակ ազդեցությունը թողնել: Ավելի շատ առաջացնել անվտանգություն ընտրական գործընթացի նկատմամբ, քան՝ վտանգություն: Հիմա կոնկրետ թանաքների հետ կապված. կան մի քանի խնդիրներ, որոնք պետք է բարձրաձայնվեն: Խնդիր առաջին. ուսումնասիրել ենք այն երկրների փորձը, որոնք թանաքանյութ կիրառել են իրենց ընտրություններում և խնդիրն այն է, որ կիրառվող անգույն թանաքանյութը, գոնե մեզ ծանոթ երկրներում, որտեղ կիրառվել է, շփման ժամանակ անցնում է ձեռքից ձեռք: Այսինքն՝ մարդը ձեռքով բարևում է մյուսին և թանաքը ձեռքից ձեռք է անցնում, և այն մյուս քաղաքացին, որը չի թվարկել, զրկվում է քվեարկության իրավունքից:

Երկրորդ խնդիրն այն է, որ նշված թանաքանյութը ևս հանդիսանում է նյութ, որը համար կգտնվեն բազմաթիվ քիմիական նյութեր, որոնք կջնջեն, կհեռացնեն այն ձեռքից: Այսինքն՝ երբ մենք ունեցանք դեպքեր, երբ անձնագրերը դրոշմակնքվել էին առանձնահատուկ թանաքով և երբ ընտրությունների ժամանակ համացանցում հայտնվել էին նյութեր, երբ ինչ-որ մեկը թաց անձեռոցիկով փորձ էր անում այն մաքրել՝ ցույց տալու համար, որ թանաքն անհետանում է տարաբնույթ նյութերի ազդեցության ներքո: Հիմա, եթե խոսքը վերաբերում է անձնագրի էջին, ապա ձեռքերի պարագայում, կարծում եմ, ձեռքերը տարբեր նյութերով լվանալը շատ ավելի հեշտ է: Եվ հիմա, երբ արդեն ունենք այն նյութերի ցանկը, որը հրապարակված է համացանցում, և այս պարագայում գնալ ձեռքերի թանաքոտմանը, սա բերելու է նրան, որ ունենաք նույնպիսի շահարկում, որպիսին ունենում էինք դրոշմակնքման թանաքանյութի պարագայում:

Եվ երբորդ կարևոր խնդիրը, որը ես տեսնում եմ. գոնե մենք, համենայն դեպս, մեր ուսումնասիրած երկրների փորձով չկարողացանք գտնել, ինքներս էլ չենք պատկերացնում այս պահին հարցի լուծումը հետևյալ իրավիճակի համար. մարդը գալիս է տեղամաս, նրա ձեռքի վրա կան թանաքանյութի հետքեր, սակայն ընտրողների ցուցակում, նրա ազգանվան դիմաց չկա ստորագրություն, ինչը փաստում է, որ նա չի եկել տեղամաս՝ քվեարկելու: Եվ ապտեղ առաջանում է հարցը՝ ինչպե՞ս վարվել. թույլ տալ անձին քվեարկել, թե՛ ոչ: Թույլ տալու դեպքում առաջանալու է կասկած, որ նա, այնուամենայնիվ, եղել է որևէ այլ տեղամասում, թույլ չտալու դեպքում տվյալ քաղաքացու կողմից սա ներկայացվելու է որպես իր ընտրական իրավունքների խախտում:

Այսինքն՝ այս հարցի պրակտիկ լուծում մենք նույնիսկ օրենսդրորեն չկարողացանք գտնել:

-Բայց ապացուցվեց, որ թանաքանյութն էլ անձնագրից ջնջվում է, չէ՞:

-Մենք բազմիցս առիթ ունեցել ենք այդ կապակցությամբ նշելու, որ թանաքանյութի կրառումը անձնագրի մեջ ընդամենը հանդիսանում է լրացուցիչ գործիք, մենք Ընտրական օրենսգրքում ունենք շատ ավելի շատ գործիքներ, որոնք կոչված են կանխելու կրկնակի քվեարկությունները:

Նախ՝ ընտրողների ցուցակը. մենք կազմում ու հրապարակում ենք ընտրողների ցուցակը: Այսինքն՝ նույն անձի մի քանի տեղամասերում գտնվելը սկզբունքորեն բացառվում է: Ընտրողների ցուցակը հրապարակվում է Ոստիկանության կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ: Այդ ցուցակը կա ԿԸՀ-ի կայքում՝ որոնման հնարավորությամբ: Դրանք հրապարակվում են տեղամասային կենտրոններում: Հիմա, երբ ընտրողը գալիս է ընտրական տեղամաս, առաջին գործողությունը, որ կատարում է, մոտենում է ընտրողներին գրանցող և քվեաթերթիկներ հատկացնող հանձնաժողովի անդամներին, որոնք աշխատում են նույն սեղանի մոտ նստած: Նախ, օրենքն ուղղակիորեն ամրագրել է, որ այդ հանձնաժողովներ անդամների միջև պետք է լինի աշխատատեղ վստահված անձի համար, ով հետևում է ողջ գործընթացին: Այստեղ առավելություն է տրված ընդդիմությանը ներկայացնող վստահված անձին:

Հիմա՝ մարդը գալիս է, ստուգում են անձնագիրը, եթե ցուցակում չի ստորագրել, նշանակում է՝ նա չի եկել քվեարկության: Ստորագրում է, ստանում է քվեաթերթիկ, գնում, քվեարկում է: Իսկ եթե նրա ազգանվան դիմաց դրված է ստորագրություն, այլևս պետք չէ, որ նա հասնի քվեատուփի մոտ, նոր հասկանան, որ նա մեկ անգամ արդեն եղել է տեղամասում:

-Իսկ այս անգամ ավելի կատարելագործված, այսպես ասած՝ նոր սերնդի թանաքներ բերելո՞ւ եք՝ հաշվի առնելով նախորդ փորձը:

-Պահանջը մնում է Ընտրական օրենսգրքում, որ նմանատիպ հատկանիշներով թանաքանյութ պետք է օգտագործվի նաև այս անգամ:

-Այսինքն՝ նույն թանաքը, ինչն օգտագործվել է նախորդ ընտրություններում:

-2012-ի թանաքանյութի կիրառության ընթացքում ի հայտ եկած խնդիրներից հետո

բնականաբար, 2013-ին դրանք, մեծամասամբ, շտկված էին, և այս անգամ ևս մենք փորձեցինք գտնել նմանատիպ հատկանիշներով թանաքանյութ պատրաստող կազմակերպություն, բայց մեր երկարատև ուսումնասիրության արդյունքներում պարզվեց, որ բացի նշված կազմակերպությունից, որևէ այլ կազմակերպություն նման թանաքանյութ չի առաջարկում: Եվ բնականաբար, այդ թանաքանյութը ձեռք ենք բերել նույն այդ կազմակերպությունից:

-«Նույնականացման քարտերի» մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական նախաձեռնության քննարկման ժամանակ ընդդիմության ներկայացուցիչը հայտարարեց, որ երկու անգամ ընտրություններին մարդիկ քվեարկել են նույնականացման քարտերով, ինչը ԱԺ ամբիոնից հերքվեց: Ունե՞ք այս մասին տվյալներ, կասկածներ:

-Վերջին ընտրությունների հետ կապված մենք ունեինք նման արձանագրված տվյալներ, դրանք եզակի դեպքեր էին՝ տարբեր համայնքներում, և խոսքը, եթե չեմ սխալվում, վերաբերում էր 4-5 քաղաքացու: Մի քանի դեպք էլ մեկ այլ համայնքում, ինչն արձանագրվել էր տեղական դիտորդների կողմից: Վերջիններս փաստել էին, որ եղել են դեպքեր, երբ հանձնաժողովը թույլ է տվել նույնականացման քարտ ունեցող քաղաքացուն քվեարկել: Այսպես ասեմ... այնուամենայնիվ օրենքի պահանջը հստակ է, որ նույնականացման քարտերով մարդիկ չեն կարող մասնակցել քվեարկությանը: Բայց այդ դեպքերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն ուսումնասիրության առարկա էին դարձրել ընտրությունների արդյունքներն ամփոփելու ժամանակ և պարզել, որ այդ դեպքերն ավելի շատ եղել են փոքր համայնքներում, որտեղ մարդիկ միմյանց նույնիսկ դեմքով են ճանաչում, և հանձնաժողովն էլ ասում էր՝ «քանի որ մենք նրանց ճանաչում էինք»,... չգիտեմ... և նկատի ունենալով, որ դա եղել է նրա անձը հաստատող միակ փաստաթուղթը, մյուս կողմից, դա ինքնանպատակ չէ, դրա համար էլ եղել է այդ վրիպումը:

-Հիմա նման ռիսկ դիտարկո՞ւմ եք, երբ 180 հազար մարդ ունի նույնականացման քարտ: Անհասկանալի է, որ մարդիկ ունեն երեք խումբ անձնագրեր. մի մասը սովորական, մի մասը ն՝ սովորական, և՛ կենսաչափական, մի մասն էլ՝ ն՝ սովորական, և՛ կենսաչափական, և՛ նույնականացման քարտ:

-Ռիսկ չեմ տեսնում առհասարակ, որովհետև անձի անունը գրված է ընտրողների ցուցակում՝ մեկ անգամ, և եթե նա մեկ անգամ ստորագրեց իր անվան դիմաց, վերջինս որևէ հնարավորություն չի ունենալու քվեարկելու մեկ այլ տեղամասում՝ լրացուցիչ: